PRESS RELEASE

PR23/382

ԱՄՀ աշխատակազմն ավարտում է Հայաստանի «Պահուստային ծրագրի» շրջանակում երկրորդ ամփոփիչ ստուգումը և IV հոդվածի շրջանակում խորհրդակցությունը

Անհապաղ հրապարակման համար

Առաքելության ավարտին կազմվող մամուլի հաղորդագրությունները ներառում են ԱՄՀ աշխատակազմի թիմերի հայտարարությունները, որոնք փոխանցում են երկիր կատարած այցից հետո նախնական եզրահանգումները: Սույն հայտարարության մեջ արտահայտված են ԱՄՀ աշխատակազմի տեսակետները և պարտադիր չէ, որ ԱՄՀ Գործադիր խորհրդի տեսակետները ներկայացնեն: Սույն առաքելության նախնական եզրահանգումների հիման վրա աշխատակազմը կկազմի զեկույց, որը ղեկավարության կողմից հաստատվելու դեպքում կներկայացվի ԱՄՀ Գործադիր խորհրդին՝ քննարկման և որոշման կայացման համար:

- 2023 թ.-ին Հայաստանի տնտեսական աճի բարձր տեմպըշարունակվեց, ընդ որում տարվա առաջին կիսամյակում տնտեսությունն աճեց 10.5 տոկոսով: Սպասվում է, որ ՀՆԱ-ի աճը 2023թ.-ին կհասնի 7 տոկոսի և 2024 թ. կդանդաղի մինչև ավելի կայուն՝ շուրջ 5 տոկոս մակարդակի:
- Քաղաքականության առաջնահերթություններն են՝ մակրոտնտեսական կայունության պահպանումը, տնտեսության դիմակայունության ամրապնդումը և ապրանքային և աշխատանքի շուկաներում, եկամուտների մոբիլիզացման և հանրային ներդրումների կառավարման և բիզնես միջավայրի բարելավմանն ուղղված կառուցվածքային բարեփոխումների շարունակումը՝ արտադրողականության խթանման և ավելի ներառական աճի խրախուսման համար:
- ԱՄՀ-ն և Հայաստանի իշխանություններն աշխատակազմի մակարդակով համաձայնության են եկել «Պահուստային ծրագրի» (SBA) երկրորդ ամփոփիչ ստուգման շուրջ: «Պահուստային ծրագիրը», որը Հայաստանի իշխանությունները դիտարկում են որպես կանխարգելիչ, նպատակաուղղված է քաղաքականության շարունակականության ապահովմանը և կառավարության բարեփոխումների ծրագրին օժանդակելուն:

700 19th Street NW
Washington, DC 20431
USA

Վաշինգտոն, ԿՇ – նոյեմբերի 7, 2023 թ.. Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) թիմը, Իվա Պետրովայի գլխավորությամբ, սեպտեմբերի 13-25-ի ընթացքում այցելեց Հայաստան՝ IV հոդվածի շրջանակում 2023 թ. խորհրդակցության և Հայաստանի հետ «Պահուստային ծրագրի» (SBA) երկրորդ ամփոփիչ ստուգման շուրջ քննարկումներ անցկացնելու համար: Քննարկումների ավարտին տկն.Պետրովան արել է հետևյալ հայտարարությունը.

«Ուրախ եմ հայտարարել, որ ԱՄՀ թիմը եզրափակել է 2023 թ. IV հոդվածի շրջանակում խորհրդակցության շուրջ քննարկումները և աշխատակազմի մակարդակով երկրորդ ամփոփիչ ստուգումը եզրափակելու համաձայնություն ձեռք բերել Հայաստանի իշխանությունների տնտեսական բարեփոխումների ծրագրի շրջանակում, որին օժանդակում է ԱՄՀ-ի եռամյա «Պահուստային ծրագիրը»: Համաձայնությունը ենթակա է ԱՄՀ-ի գործադիր խորհրդի հաստատմանը, որի կողմից ամփոփիչ ստուգման քննարկումը նախատեսվում է դեկտեմբերի կեսին: Խորհրդի կողմից հաստատումը մոտավորապես 24.3 միլիոն դոլարից (18.4 միլիոն փոխառության հատուկ իրավունք ((ՓՀԻ) օգտվելու հնարավորություն կտա՝ ընդհանուր հասանելիությունը հասցնելով շուրջ 72.9 միլիոն դոլարի (55.2 միլիոն ՓՀԻ) :

Չնայած համաշխարհային տնտեսական անբարենպաստ միջավայրին՝ 2023 թ.-ին Հայաստանի տնտեսական աճը շարունակվեց բարձր տեմպով, ընդ որում տարվա առաջին կիսամյակում տնտեսությունն աճեց 10.5 տոկոսով, որին նպաստեցին մասնավոր սպառման, ծառայությունների արտահանման բարձր ցուցանիշները: Գնաճը զսպված է մնացել, այդ թվում՝ պայմանավորված դրամավարկային նախաձեռնողական քաղաքականությամբ, փոխարժեքի արժևորմամբ և պարենային ու տրանսպորտի գների նվազմամբ: Սակայն ծառայությունների գների աճն ավելի կոշտ է եղել: Բյուջեի ընդհանուր հաշվեկշռում մինչև 2023 թ. սեպտեմբերը ներառյալ ՀՆԱ-ի 0.7 տոկոսի հավելուրդ գրանցվեց, իսկ կառավարման կենտրոնական մարմինների պարտքը մնաց կայուն: Բանկային համակարգը կապիտալի և իրացվելիության բարձր պաշարներ (բուֆերներ) ունի, և համակարգի բարձր շահութաբերությունը շարունակում է պահպանվել:

Եկամտի և կապիտալի հոսքերի նվազմանը և համաշխարհային ու ներքին ֆինանսական խիստ պայմանների պահպանմանը զուգահեռ սպասում ենք աճի թուլացում՝ 2023 և 2024 թթ.-ին հասնելով համապատասխանաբար 7 և 5 տոկոսի: Թեև աճը կարող է անակնկալ մատուցել եկամտի և կապիտալի հոսքերի վերսկսման և բարեփոխումների հաստատուն իրականացման դեպքում, ավելացել են նվազման ուղղությամբ ռիսկերը, այդ թվում՝ աշխարհաքաղաքական լարվածությունների, համաշխարհային ֆինանսական խիստ պայմանների, արտաքին պահանջարկի դանդաղման և կապիտալի հոսքերի կտրուկ հակադարձման հետևանքով:

Իշխանությունները նախաձեռնողաբար արձագանքեցին Լեռնային Ղարաբաղից 100 000-ից ավելի էթնիկ հայ փախստականների կարիքներին, այդ թվում նրանց կենսական կարիքները հոգալու համար տրամադրելով դրամական օժանդակություն, ժամանակավոր կացարաններ, ինչպես նաև ֆինանսական օգնություն կեցության և կոմունալ ծախսերն ապահովելու համար: Նրանց միջինից-երկարաժամկետ կարիքների շարունակվող համապարփակ գնահատումը, այդ թվում՝ կապված բնակարանային ապահովման, կրթության, զբաղվածության և սոցիալական պաշտպանության հետ, կօգնի Հայաստանում նրանց ինտեգրմանը:

2024 թ. բյուջեի նախագծով պատշաճ կերպով հաշվի է առնվում փախստականներին աջակցությունը՝ միաժամանակ ապահովելով մակրոտնտեսական կայունությունը: Սպասվում է, որ բյուջեի պակասուրդը կօժանդակի առաջնահերթ սոցիալական և կապիտալ ծախսերին՝ շարունակելով եկամուտների մոբիլիզացումը բարելավելու ջանքերը: Այն նաև պետք է օգնի զերծ պահել տնտեսությունը գերտաքացումից և պահպանել պարտքի չափավոր մակարդակը

Գնանկումային ճնշումների պայմաններում ՝ թողարկման դեռևս դրական ճեղքվածքով, ՀՀ Կենտրոնական բանկը (ԿԲ) սկսել է դրամավարկային քաղաքականության աստիճանական նորմալացումը և անհրաժեշտ է, որ շարունակի տվյալներից կախվածության իր մոտեցումը՝ ապահովելու, որ գնաճի սպասումները խարսխված մնան: Անհրաժեշտ է, որը ճկուն փոխարժեքը ցնցումների հիմնական կլանողը մնա: ՀՀ ԿԲ-ն շարունակում է նորմատիվային և վերահսկողական դաշտի կատարելագործման իր ջանքերը՝ ֆինանսական հատվածի ռիսկերի, այդ թվում՝ բնակարանային գների աճով պայմանավորված, զսպմանն օգնելու համար:

Միջնաժամկետ հեռանկարում կարևոր է քաղաքականության և բարեփոխումների իրականացման բարձր տեմպ պահպանումը՝ կառուցելով հարկաբյուջետային բուֆերներ և Է՛լ ավելի ուժեղացնելով միջնաժամկետ կայունությունը, պահպանելով գնաճի սպասումների խարսխումը, երաշխավորելով ֆինանսական կայունությունը, ավարտելով կառավարման բարեփոխումները ու խթանելով արտադրողականությունը՝ կայուն և ներառական աճի ապահովման համար: ՀՀ կառավարության 2021-2026 թթ. բարեփոխումների ծրագրով նախատեսված գիտելիքահենք, արտահանմանն ուղղված և ներդրումներով պայմանավորված աճի ռազմավարությամբ պահանջվում է կառուցվածքային բարեփոխումների հաստատուն իրականացում և ներդրումների բարենպաստ միջավայր: Դրա իրագործման համար կարևոր է զբաղվածության և արտահանման հստակ և ծախսերի ամբողջական գնահատմամբ ռազմավարությունների մշակումը և իրականացումը, անվճարունակության (սնանկության) դաշտի արդիականացումը և կառավարման բարեփոխումների առաջնահերթության սահմանումը՝ ներդրումներին օժանդակելու և բիզնես միջավայրի բարելավման համար, հանրային ներդրումների կառավարման միջոցառումների ծրագրի իրականացումը՝ կապիտալ ծախսերի իրականացումն ու որակը բարելավելու համար և եկամուտների ավելացմանն ուղղված հարկային քաղաքականության, այդ թվում՝ հարկային ծախսերի ռացիոնալացման և հարկային վարչարարության շարունակվող բարեփոխումների միջոցով հարկաբյուջետային հնարավորությունների (տարածքի) ստեղծումը:

ԱՄՀ թիմը շնորհակալություն է հայտնում Հայաստանի իշխանություններին, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի, զարգացման գործընկերների և դիվանագիտական համայնքի ներկայացուցիչներին՝ արգասաբեր քննարկումների և համագործակցության համար»: